ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու բաց ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար շինությունների ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.04.2016թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Հովսեփյանը, Հ.Սահակյանը, Ե.Հովհաննիսյանը, Վ. Հարությունյանը և քարտուղար Գ.Մանուկյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **<Տրանսունիվերսալ> ՓԲԸ (ք. Երևան, Զավարյան 13/1)**
2. **<Նաիրիշին> ԲԲԸ (ՀՀ Կոտայքի մարզ, ք. Եղվարդ, արտադրական հանգույց 18/1)**
3. **<ՄարտՇին> ՍՊԸ (ք. Երևան, Նորք 2-րդ նրբ. 17)**
4. **<Ագարակ> ԲԲԸ (ՀՀ Արագածոտնի մարզ գ.Փարպի)**
5. **<Գամշին> ՍՊԸ (ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Բաբաջանյան 1)**
6. **<Կոտայք Շին> ՍՊԸ և <Մասիս> Ա/Կ կոնսորցիումով (ՀՀ Կոտայքի մարզ գ. Կոտայք)**
7. **<Սասունասար> ՍՊԸ (ք. Երևան, Ազատության նրբ. 4$_2$, բն.75)**
8. **<Ժիլո> Ա/Կ (ք. Երևան, Բագրատունյանց 69)**
9. **<Ջատեգ> ՍՊԸ (ք. Երևան, Նար-Դոսի 1$_2$, բն. 31)**
10. **<Աննա 80> ՍՊԸ (ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Դ. Դեմիրճյանի 20/23)**
11. **<Ագաթ-777> ՍՊԸ (ք. Երևան, Շիրակի փակուղի 4)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 11.04.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների, բացառությամբ **<ՄարտՇին> ՍՊԸ-ի, <Ագարակ> ԲԲԸ-ի, <Սասունասար> ՍՊԸ-ի և <Աննա 80> ՍՊԸ-ի** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

2.2. **<Մարտշին> ՍՊԸ-ի, <Ագարակ> ԲԲԸ-ի, <Սասունասար> ՍՊԸ-ի և <Աննա 80> ՍՊԸ-ի** կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ լիցենզիաների:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Բոլոր մասնակիցների, բացառությամբ **<Մարտշին> ՍՊԸ-ի, <Ագարակ> ԲԲԸ-ի, <Սասունասար> ՍՊԸ-ի և <Աննա 80> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:
3.2 **<Մարտշին> ՍՊԸ-ի, <Ագարակ> ԲԲԸ-ի, <Սասունասար> ՍՊԸ-ի և <Աննա 80> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված մնացած փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝

Համաձայն ՀՀ կառավարության 10.02.11 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել 13.04.2016թ. ժամը 10:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Հ.Սահակյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ.Մանուկյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-4

«ՀՀՔԿԴ-ԲԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնումներ կատարելու բաց ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար շինությունների ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 13.04.2016թ. ժամը 10^{00}-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա.Հովսեփյանը, Հ.Սահակյանը, Ե.Հովհաննիսյանը, Վ. Հարությունյանը և քարտուղար Գ.Մանուկյանը:

1. **Անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ.**

<Մարտշին> ՍՊԸ-ի, <Ագարակ> ԲԲԸ-ի, <Սասունասար> ՍՊԸ-ի և <Աննա 80> ՍՊԸ-ի սահմանված ժամկետում ներկայացրել են հրավերով պահանջվող լիցենզիաները, որը համապատասխանում է հրավերի պահանջներին:

2. ՀՀ քննչական կոմիտեի ք.Երևան, Մամիկոնյանց 46/3 և 46/4 հասցեներում գտնվող շինությունների ընթացիկ վերանորոգման և հարդարման աշխատանքների կատարման համար յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գիները

Հ/Հ	Մասնակիցների անվանումները	ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/
1	<Տրանսունիվերսալ> ՓԲԸ	18418333
2	<Նախրիշին> ԲԲԸ	18827050
3	<Մարտշին> ՍՊԸ	19083333
4	<Ագարակ> ԲԲԸ	19333333
5	<Գամշին> ՍՊԸ	19800000
6	<Կոտայք Շին> ՍՊԸ և <Մասիս> Ա/Կ կոնսորցիում	20760680*
7	<Սասունասար> ՍՊԸ	22275000
8	<Ժիլյո> Ա/Կ	22295850
9	<Ջատեզ> ՍՊԸ	22500000
10	<Աննա 80> ՍՊԸ	23705000
11	<Ագաթ-777> ՍՊԸ	24675000

* Կազմակերպությունը հանդիսանում է ԱԱՀ չվճարող

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4. Հանձնաժողովը որոշեց՝

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Տրանսունիվերսալ>** ՓԲԸ -ին:

Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ներկայացրած գինը ցածր են հայտով նախատեսված առավելագույն գնի 75տոկոսից:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել՝ **<Նաիրիշին> ԲԲԸ -ին:**

2. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 12.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ՖՆ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը և լրացուցիչ հիմնավորումներ չհիմնավորված ցածր գնային առաջարկի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ _____ Գ. Արշակյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Հովսեփյան

_____ Հ.Սահակյան

_____ Վ. Հարությունյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Գ.Մանուկյան